

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ “ՃԱՌՔ ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄՔ” ԵՐԿԸ

ՊԵՏՐՈՍՅԱՆ Ն. Լ.

Հայ եկեղեցական մատենագրության մեջ Գրիգոր Լուսավորչի անունով հայտնի երկերի շարքում իր բարոյախրատական բնույթով առանձնանում է “Յաճախապատում ճառքը”։ Այս մասին մեր առաջին վկայությունը դարձյալ Ագաթանգեղոսինն է։ Նա գրում է, որ Լուսավորիչը “զաւետարանական ընթացսն և զվերակացութիւնն եկեղեցւոյ” ավարտելուց հետո “յետ այնպիսի գործոց, դարձեալ առաւել բարձրագոյն վարդապետութեամբ” զբաղվելով, գրեց “Ճառս յաճախագոյնս, դժուարապատումս, առակս խորիմացս դիւրալուրս բազմադիմիս շնորհագիրս, յարդարեալք ի զօրութենէ և ի հիւթոյ գրոց մարգարեականաց, լի ամենայն ճաշակօք կարգեալս և յօրինեալս աւետարանական հաւատոցն ճշմարտութեան”¹։

“Յաճախապատումը”, իսկապես, մեր մատենագրության գանձերից է, հնագույն և կրոնական բնույթի երկերից մեկը, որով սերունդներ են դաստիարակվել։

“Յաճախապատումը” ընդարձակ, մանրամասն պատմող, հաճախաբան, ինչպես նաև կրոնական, մեկնաբանական կամ վարդապետական գրվածք է, բանավոր կամ գրավոր շնորհավորանքի խոսք, ներբողական։ Երբեմն էլ գործածվում է “Երկարաբանություն” իմաստով²։ “Յաճախապատում՝ որ և յաճախաբան, ուր իցեն յաճախ պատմութիւնք՝ այսինքն ճառք և մեկնութիւնք վարդապետականք, որպիսին է մատենան Լուսավորիչի”³, - բացատրում է Հայկազյան բառարանը։

Լուսավորչի “Յաճախագոյն” ճառերի մասին Մ. Չամչյանը գրում է. “Կարգեաց և յօրինեաց բազմապատիկ ճառս գեղեցիկս և ընտիրս, առաջի դնելով զյոլով առակս և նմանութիւն առ ի դիւրընկալ ընծայելոց տգիտաց”⁴։

¹ Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ՝ Գ. Տէր-Մկրտչյանի, Ստ. Կանայեանցի, Էջմիածին-Տիֆլիս, 1909, էջ 445։

² Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 3, Ե., 1974, էջ 439։

³ Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆԲՀԼ), հ. Ա, Ե., 1979, էջ 540։

⁴ Չամչեան Մ., Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1784, էջ 524։

Մի կողմ թողնելով այն հանգամանքը, որ ճառերին բնորոշ են համեմատությունները՝ միտքը պարզելու, դուրսբերելի դարձնելու նպատակով, նկատենք, որ ըստ էության՝ նույն իմաստն են խտացնում Մ. Չամչյանի նշած «բազմապատիկ» և Կորյունի՝ «յաճախագոյն» հասկանիշները:

Լուսավորչի անունով «Հաճախապատում ճառքը» հիշատակվում է նաև VII դ. կազմված «Կնիք հաւատոյ» ժողովածուում⁵ և հետագա դարերի մի շարք երկերում: Դեռևս Կորյունն իր «Վարք Մաշտոցի» երկում⁶ փաստում է որ «բազում թուղթս խրատագիրս զգատացուցիչս» գրելուց հետո «այնպիսի առաւել և բարձրագոյն վարդապետութեամբն սկսեալ երանելոյն Մաշտոցի ճառս յաճախագոյնս, դիւրապատումս, շնորհագիրս, բազմադիմիս ի լուսաւորութենէ և ի հիւթոյ գրոց մարգարէականաց կարգել և յօրինել»:

Բնչպես տեսանք, Ագաթանգեղոսը նույնը գրում է Լուսավորչի մասին, գրեթե բառացի: Եվ Կորյունի սույն վկայությունը պատճառ է դարձել, որ օտար և հայ բանասերներից ոմանք «Յաճախապատումի» հեղինակ համարեն Մեսրոպ Մաշտոցին⁷:

XIX դ. վերջին գերմանացի գիտնական Պ. Ֆեթթերը առաջիններից մեկն էր, որ քննության առավ «Յաճախապատումի» հեղինակի հարցը և այն վերագրեց Մեսրոպ Մաշտոցին⁸: Այս կարծիքին համամիտ չէր Եղիշէ պատրիարք Դուրյանը. «Աննշան կը թուին մեզ այն ապացուցումները՝ զորս յառաջ կը բերէ Ֆեթթէր եւ որոնք անճշտութիւններէ ալ զերծ չեն կրնար համարուիլ, ...տարակուսելի է այդ ճառերուն հեղինակ համարել Մ. Մեսրոպը»⁹: Ըստ Ե. Դուրյանի՝ «Եթէ կարելի չէ «Յաճախապատումի» հեղինակությունը «ընծայել» Լուսաւորչին, «նույնչափ և չէ կարելի ընծայել Մեսրոպայ, վասնզի զայլն ամենայն թողլով, կիտրիինք թէ անհնար էր, որ մեծ վարդապետին (Մեսրոպի-Պ.Ն.) յայտնի մէկ գործը շփոթութեան կամ մոռացման դատապարտուէր առաջին օրէն, մինչդեռ, ընդհակառակը, առհասարակ պետք էր ծանօթ լինէր ոչ միայն մեր մատենագրաց դասուն,

⁵ Կնիք հաւատոյ, Էջմիածին, 1914, էջ 18:

⁶ Կորյուն, Վարք Մաշտոցի, Ե., 1941, էջ 78:

⁷ Տէր-Մինասյան Ե., Հայոց գրականության սկզբնավորությունն ու զարգացումը (Պատմա-բանասիրական հանդես, 1970, N 2, էջ 62-64):

⁸ Եղիշէ պատրիարք Դուրեան, Պատմութիւն հայ մատենագրութեան, Երուսաղէմ, 1933, էջ 420, Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. Ա, Ե., 1959, էջ 212, Ֆեթթէր Պ., Հայկական աշխատասիրութիւնը, Վիեննա, 1895, էջ 69, 78: Գասպարյան Դ., Հայ հին և միջնադարյան գրականության պատմություն, Ե., 2009, էջ 129-130:

⁹ Եղիշէ պատրիարք Դուրեան, նշվ. աշխ., էջ 420:

այլ և բովանդակ ազգին¹⁰։ Իր համոզմունքը նա փաստարկում է այն հանգամանքով, որ եթե որևէ մեկը այդ ճառերի մեծագույն մասը օտար լեզվով խմբագրված և հետագայում թարգմանված համարի, ապա այդ դեպքում ճիշտ չի լինի նաև այդ ճառերի թարգմանությունը առաջին թարգմանիչներից մեկին վերագրելը, քանի որ ճառերում հանդիպում են բառեր և բացատրություններ V դ. վերջերից¹¹։

Մեծավաստակ հայագետ Մանուկ Աբեղյանը, հետևելով Ֆեթթերին, գրում է, որ կա “Յաճախապատում ճառք” վերնագրով մի ժողովածու, որը հենց Կորյունի հիշատակած գիրքն է, բայց քանի որ դա դավանաբանական նշանակություն է ունեցել, վերագրվել է Գրիգոր Լուսավորչին՝ այդ գրվածքին ավելի մեծ հեղինակություն ընծայելու համար. “...իսկ որ Ագաթանգեղոսի մեջ նա նման ձևով պատմվում է Ս. Գրիգորի համար, թե նա ճառեր է հորինել, դա արժեք չունի այդ ճառերի հեղինակի նկատմամբ”¹²։ Մ. Աբեղյանը “Յաճախապատումի” գրության ժամանակը ընդունում է 420-ական թթ.։

Ինչպես տեսնում ենք, հայ բանասիրության մեջ առկա է տարակարծություն “Յաճախապատումի” հեղինակի, լեզվի և գրության ժամանակի մասին։ Անշուշտ, թե Գրիգոր Լուսավորիչը, թե Մեսրոպ Մաշտոցը պաշտելի և երախտաշատ անուններ են և՛ մեր եկեղեցու, և՛ մեր մատենագրության, և՛ մեր ժողովրդի համար։ Հարց է առաջանում՝ մի՞թե մեր պատմիչներն ու մատենագիրները պատճառ ունենին Մաշտոցի գրչին պատկանող “Յաճախապատումի” հեղինակությունը բարձրացնելու համար այն վերագրել Լուսավորչին կամ դնել նրա անվան հովանու ներքո։

Լուսավորիչը, բնականաբար, կարող էր գրել նմանատիպ ճառեր, քանզի, ինչպես նշում է Մ. Օրմանյանը, “Լուսավորչի կարողությունեն հեռու չենք գտնել գրական արդիւնքներ, վասնզի լաւ յունական զարգացում ստացած էր Փիրմիլիանոսի ձեռքին”¹³։ IV դ. սկզբին քրիստոնեության ընդունումը Հայաստանում պատմական կարևոր իրադարձություն էր։ Քրիստոնեությունը մի նոր գաղափարախոսության և ազգային ոգու արթնացման սկիզբն էր և կարևոր ազդակը։ Գրիգոր Լուսավորիչը կարողացավ նոր վարդապետության համար հաջող հող նախապատրաստել։ Այս առումով ճիշտ է նկատել Լեոն. “Ամենեն դժվար գործը, որ կանգնած էր հենց սկզբից քրիստոնեության առաջ՝ ժողովրդի դաստիարակությունն էր։

¹⁰ Նույն տեղում, էջ 425։

¹¹ Նույն տեղում, էջ 424

¹² Աբեղյան Մ., Երկեր, հ. Գ, Ե., 1968, էջ 120։

¹³ Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 115։

...Փրկել նոր կրոնը կարելի էր ժողովուրդը դաստիարակելու միջոցով¹⁴։ Տրդատ Գ-ի օրոք արթնացել էր հայ ազգի ոգին, որը կարող էր պահպանվել միայն հայ դպրությանը։ Այն, ինչ հայ թարգմանիչների դպրոցը պետք է աներ գրերի գյուտին հաջորդած ժամանակաշրջանում լեզվի հրապարակային կիրառման համար, արդեն իր առջև ուներ նախընթաց շրջանում, երբ Ավետարանի քարոզության և մասնավորապես Ս. Գրքի (հունարեն կամ ասորերեն) բերանացի հետերոկլիկ (այլալեզու) թարգմանությանն անակոչվ նոր գրական լեզու էր հղվում, որ հետո զարգացավ Սահակ-Մեսրոպյան դպրոցի շնորհիվ¹⁵։ IV դարում հայերեն խոսակցական լեզվի կատարելության մասին Մ. Աբեղյանը գրում է՝ «մշակված կոկված ու հարստացած է եղել»¹⁶։

Խորենացին վկայում է, որ գրերի գյուտից առաջ «վասն ոչ լինելոյ գիր և դպրութիւն ի ժամանակի», այնուամենայնիվ, «գտանէին առ մեզ անբաւ գրուցաց մատեանք»՝ հունարեն և ասորերեն լեզվով գրված¹⁷։

Հայ բանասիրության և հայագիտության կողմից ընդունված կարծիքն այն է, որ գրերի գյուտից առաջ IV դարում, պետք է հունատառ հայերենով գրված լինեին մի շարք սաղմոսներ, աղոթքներ՝ «Հայր մեր», «Հաւատամք», «Փառք ի բարձունս», ինչպես նաև «Յաճախապատումը» և Ագաթանգեղոսիոս Բուզանդի «Հայոց պատմութիւն»-ները¹⁸։ Անկարելի է, որ մի ամբողջ դար հայ եկեղեցին մնար առանց հայերեն գրվածքների, և «մերոյ լուսաւորութեան լուսաւոր վերակացուն» իր նորադարձ «հօտին թողներ առանց մի հաստատուն վարդապետութեան, քանի որ նորա հաջորդներն ու աշակերտները շարունակաբար շեշտում են իրենց գործունեութեան առանցքը, թէ պետք է և պարտ է միշտ հաւատարիմ մնալ Հայոց եկեղեցու հռչակաւոր սուրբ Հօր պատուիրաններին»¹⁹։

«Յաճախապատումը» մեծ արժեք է ներկայացնում մեր եկեղեցական մատենագրության մեջ՝ որպես «Հայ եկեղեցու առաքելական վարդապետության հիմնական աղբյուր. Աստվածաշնչից հետո այն

¹⁴ Լեո, Երկերի ժողովածու, հ. Ա, Ե., 1966, էջ 420-424։

¹⁵ Տէ՛ս Սարգսյան Գ., Պատմագիտական հետազոտություններ, Ե., 2006, էջ 224-229։

¹⁶ Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 86։

¹⁷ Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, Տիփլիս, 1913, էջ 242-243։

¹⁸ Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Ա, էջ 102։

¹⁹ Տէր-Միքէլեան Ա., Յաճախապատում ճառք լուսաւորք, Ս. Էջմիածին, 1894, առաջաբան, էջ Ը։

անփոփոխ տալիս է “դավանական և բարոյական բոլոր սկզբունքներն իբրև հիմունք և սահման նորա հաւատարիմ որդւոց”²⁰:

“Յաճախապատումը” բաղկացած է 23 (ԲԳ) հոգելից, հոգեշահ ճառերից, որոնցից յուրաքանչյուրը նվիրվել է կա՛մ դավանական, կա՛մ բարոյախոսական որևէ նյութի: Գրիգոր Լուսավորիչը ԺԷ ճառի առաջին տողում նշել է այս երկի գրության նպատակի, բովանդակության, ինչպես նաև հոգևոր արժեքի մասին. “Գրել ձեզ և ուսուցանել կամիմ, եղբարք իմ և որդիք, զորս ի Քրիստոս Աւետարանաւ ծնաւ”²¹: Խոսքը, անկասկած, ուղղված է նորադարձ քրիստոնյաներին: Այսպիսի հեղինակությամբ, հայրական շեշտով ու խանդաղատանքով Հայոց Հայրապետը միայն կարող էր խոսել և վկայել և ոչ թե մեկ այլ անձ:

Ճառերի նյութը կրոնաբարոյական է: Դրանք ունեն խրատական, ուսուցողական բնույթ ու նկարագիր: Ուսուցանելով քրիստոնեական հավատք, բարոյական արժեքներ՝ հեղինակը ձգտում է նորադարձ հոգիների մեջ արմատավորել սրբություն և առաքինություն: Խրատում է բարին գործել, հեռու մնալ չարից՝ “աշխարհի խաղաղութեան և շինութեան համար”²²:

Լինելով բարոյախրատական ճառերի ժողովածու՝ “Յաճախապատում ճառքը” հոգևոր, գիտական, մշակութային և իմացաբանական մեծ ազդեցություն է թողել իր և հետագա ժամանակների հասարակական մտքի զարգացման, ինչպես նաև սերունդների հոգևոր դաստիարակության վրա: Ճառագիրը կրոնական թեմաներին զուգընթաց շոշափել է նաև այլ կարևոր հարցեր՝ փորձելով մարդ անհատին ուղղորդել դեպի ինքնաճանաչում, աշխարհաճանաչություն, տիեզերաճանաչողություն:

“Յաճախապատումը” իր ժամանակի գրական լեզվով՝ դասական գրաբարով ստեղծված բարձրարժեք գրական գործ է: Բոլոր քսաներեք ճառերն էլ տրամաբանորեն իրար կապված և միմյանց լրացնող ստեղծագործություններ են: Դրանք ոչ միայն բովանդակությամբ և նպատակով մի ամբողջություն են, այլ նաև դասավորված են ըստ հերթականության՝ համակարգված թեմաներով, որոնք աստիճանաբար, սկզբից մինչև վերջ ընդգրկում են Աստվածաշնչի գլխավոր և հիմնական դրույթները:

²⁰ Նույն տեղում:

²¹ Նույն տեղում, էջ 192:

²² Նույն տեղում, էջ 74, տե՛ս նաև Մկրչյան Մ., Հայ հին գրականության պատմություն (V-X դարեր), Ե., 1976, էջ 128-129:

Առաջին ճառերում բացատրվում է Աստծո էությունը, գորությունը, արարչագործությունը, Հոր և Որդու և Սուրբ Հոգու միասնությունն ու ամբողջությունը: Հաջորդ ճառերում դրանցից բխող՝ Սուրբ գրքի հիմնական դրույթների և պատվիրանների մեկնաբանություններն են: Դուրրմբոնելիության համար հերթականության մեջ ընդգրկված միտքն աստիճանաբար զարգացվում է պարզից դեպի բարդը, և կարելի է եզրակացնել, որ գիրքը ստեղծված է հիմնականում ուսուցողական նպատակով, ուստի տեղին է այն կարծիքը, թե “Ճառքը” պետք է լինի ամեն մի բարեպաշտ մարդու սեղանի գիրքը²³: Սա հոգևոր բարձրարժեք ժառանգություն է, որը Հայ եկեղեցու դավանաբանության ու վարդապետության անփոխարինելի սկզբնաղբյուրն է:

“МНОГОВЕЩАТЕЛЬНЫЕ РЕЧИ” ГРИГОРИЯ ПРОСВЕТИТЕЛЯ

ПЕТРОСЯН Н. Л.

Резюме

“Многoveschatelnye rechi” Grigoriya Prosветителя—это одна из самых важных работ литургического характера в армянской религиозной литературе. Труд Григория Просветителя имеет огромное морально-дидактическое значение.

Хотя и авторство этого труда приписывалось Месропу Маштоцу, но на самом деле это ценное религиозно-богословское сочинение, по мнению ряда исследователей (П. Феттер, М. Абегиан и др.), было написано основоположником христианского учения Григорием Просветителем.

THE “FAITHFUL SPEECH” OF GREGORY THE ILLUMINATOR

N. PETROSYAN

Abstract

The “Faithful Speeches” of Gregory the Illuminator is one of the most important works of the liturgical character in the Armenian religious literature. The work of Gregory the Illuminator has a great moral-didactic significance.

Though the authorship of this work was attributed to Mesrop Mashtots, but in fact according to the viewpoint of a number of researchers (P. Fetter, M. Abegyan and etc.) this valuable religious-theological composition, was written by Gregory the Illuminator -the founder of the Christian teaching.

²³ Սրբոյ հօրն մերոյ երանելոյն Գրիգորի Լուսաւորիչի Յաճախապատում ճառք, Վաղարշապատ, 1894-1896 թթ., Ա. Տէր-Միքէլեանի առաջաբանը, էջ Ա: